

հի նկատմամբ:

Գիրքը գրուած է մէկ շնչով, որում հեղինակի հոգեթաթախ գրիչը բառակերպել է անբառելի, ոգի, պայթիւն ու պայքար է ներարկել իւրաքանչիւր բառի ու տողի մէջ, որից սրտափշուր է լինում ընթերցողը: Սա խօսում է այն մասին, որ պատերազմը հասունացրեց այն սերնդին, որն առաջին սիրոյ փոխարէն արտաբերում էր վառօդ, ռազմադաշտ բառերը: Սա բացիկ է ուղղուած իւրաքանչիւր հայի:

ՆԵՐՍԵՆՑ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆՈՅԵԱՆ

ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՄԱՍԻՆ

Մարդու մարմնոյն սքանչել կառուցուածքը միայն բաւական է խելացի քննողի մը ճանչցնելու, թէ սա արարածը մէկ ալ արարածոց հաւասար չէ, հապա գերագոյն բան մը պիտի ըլլայ գերագոյն վախճանի մը համար: Զգայարանաց փափկութիւնն ու կատարելութիւնը, արտաքին վսեմ շնորհալի տեսքը, ամենակերպ շարժմանց յաջողութիւնը եւ... այն աչքներն ու երեսը, որ սրտի հայելին են, ասոնք ամէնն ալ մեզի կը վկայեն, թէ մենք բոլոր կենդանական աշխարհէն շատ վեր ենք: Իսկ թէ որ քիչ մը մարդու ներսն ալ մտնենք, պէտք է որ կանչենք Գրիգոր Աստուածաբանի հետ, թէ մարդս է համառօտութիւն տիեզերաց կամ գլուխգործոց Աստուծոյ:

ՂԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Զգուշացիր բացառապէս գիտութեամբ զբաղուելէ, ինչպէս կ'ընէիր մինչ այդ: Ի հարկէ, սորվիր, հետազօտէ երկրայինը. այդ է գիտութեամբ զբաղուողին պարտականութիւնը, բայց յաւիտենական լոյսի ներքոյ քննէ տեսանելի աշխարհը: Մէկ ձեռքով հետազօտէ բնութիւնը, իսկ միւսով, ինչպէս մանկութեան օրերուն կը բռնէիր հօրդ հագուստէն, այնպէս ալ հիմա բռնէ Աստուծոյ շուրջառի ծայրէն:

ԱՆԴՐԷ ՄԱՐԻ ԱՄՊԵՐ

Այս սրբազանագոյն Գիրքին մէջ է բոլոր գաղտնիքներու գաղտնիքը: Օ՛, մահկանացուներու մէջ երջանիկ են անոնք, որոնց Աստուած շնորհած է այս Գիրքին խօսքերը լսելու, կարդալու, աղօթքով արտաբերելու եւ երկիւղածութեամբ ընկալելու ողորմութիւնը: Երջանիկ են անոնք, որոնք ի վիճակի են բանալ Աստուածաշունչի դռները եւ համարձակ ընթանալ անոր ճանապարհներով: Բայց աւելի լաւ կ'ըլլար, որ երբեք ծնած չըլլային այն մարդիկ, որոնք կը կարդան միայն կասկածի տակ առնելու եւ արհամարհելու նպատակով:

ՃՈՐՃ ԳՈՐԴՈՆ ՊԱՅՐԸՆ